# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ՔԱԼԱՇՅԱՆ Ա. Ա.

Հայաստանի Առաջին հանրապետության քաղաքական համակարգի կայացման և աստիճանական զարգացման քաղաքագիտական վերլուծությունն անխուսափելիորեն ենթադրում է մակրոմակարդակային կառուցվածքի ինստիտուցիոնալ այնպիսի համակարգի ուսումնասիրություն, ինչպիսին գործադիր իշխանությունն է: Հետազոտական այդ մոտեցումը պայմանավորված է հասարակության քաղաքական իշխանությանը բնորոշ մի շարք օրինաչափություններով: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Արդի քաղաքագիտության մոտեցմամբ քաղաքական իշխանության գործառույթներն անխուսափելիորեն ենթադրում են պետության և հասարակության, հասարակության սոցիալական տարբեր մակարդակների ու խմբերի, քաղաքական ինստիտուտների, պետական կառավարման կառույցի և նրա մարմինների, կուսակցությունների, քաղաքացիների և այլնի միջև առկա հարաբերությունների կարգավորում: Ժողովրդավարական երկրներում քաղաքական այդ պահանջը գործնականում իրագործվում է մակրոքաղաքական համակարգի ինստիտուցիոնալ այնպիսի վերին կառույցի միջոցով, ինչպիսին գործադիր իշխանությունն է: Քննվող համատեքստում պետք է կարևորել և այն, որ որևէ քաղաքական իշխանություն անխուսափելիորեն ենթադրում է պետության ու հասարակության իշխանական մարմինների, քաղաքական և ոչ քաղաքական գործընթացների տարբեր մակարդակների կառավարում ու վերահսկում, որը գործնական քաղաքական կյանքում կարող է իրագործվել միայն գործադիր իշխանության սահմանադրորեն (կամ օրենսդրական ակտերով) ամրագրված տարբեր մակարդակների լիազորություններով: Նկատենք նաև, որ ինչպես ամբողջության մեջ վերցրած՝ հասարակության քաղաքական համակարգի կառավարումը, այնպես էլ քաղաքական ռեժիմի և պետական կարգի կայացումն անհնարին կլինեն առանց այս կամ այն հասարակությանը բնորոշ կառավարման տիպի: Իսկ պետական իշխանությունը կարող է ամբողջական և ավարտուն տեսք ստանալ միայն համապատասխան գործադիր իշխանության գործառնական ամբողջության միջոցով[1]:

Քննվող հիմնահարցի շրջանակներում հարկ է կարևորել և այն, որ գործնական քաղաքական կյանքում գործադիր իշխանությունը սահմանադրորեն (օրենսդրորեն) ամրագրված իր գործառնությունը կարող է իրականացնել միայն

---

[1] Քաղաքագիտության այդ սկզբունքների մանրամասները տե՛ս ***Политология:*** *Энциклопедический словарь, М., 1993, с. 44.*

պետության անունից, իսկ քաղաքական ընթացիկ խնդիրների լուծման գործընթացում պետական կառավարումն իրականացնելու միտումով հիմնում է գործառնական բազմադեմ հատկանիշներով օժտված գործադիր իշխանության աստիճանակարգված տարբեր կառույցներ: Ժողովրդավարական հասարակարգերի գործադիր իշխանության փորձը նաև ցույց է տալիս, որ այն հետադարձ մեծ ազդեցություն ունի ինչպես հասարակության քաղաքական համակարգի, այնպես էլ ամբողջության մեջ վերցրած՝ պետական կառավարման հիմնարար բազմաթիվ հատկանիշների գործառնական առանձնահատկությունների ձևավորման գործում: Հարկ է նկատել, որ քաղաքական իշխանության և դրա համապարփակ հատկանիշը հանդիսացող գործադիր իշխանության առանձնահատկությունների քննությունը խիստ կարևորվում է հատկապես հասարակության քաղաքական համակարգի ընդհանրացնող՝ քաղաքագիտական վերլուծության տեսանկյունից:

Հասարակության քաղաքական իշխանությանը հատուկ՝ վերը թվարկած բնութագրական օրինաչափությունները դրսևորվել են նաև Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր իշխանության ձևավորման ու գործունեության ոլորտում:

Նախագահ-նախարարի (վարչապետ) գլխավորությամբ *գործադիր իշխանության* ձևավորումը եղել է Հայաստանի Առաջին հանրապետության քաղաքական համակարգի կայացման կարևորագույն քայլերից մեկը: Արդի քաղաքագիտության հանրահայտ տեսակետի համաձայն՝ «Քաղաքակիրթ երկրներում կառավարության լիազորությունները սահմանվում են գործող օրենսդրությամբ (սահմանադրությամբ կամ նրան փոխարինող ակտերով, կառավարության մասին հատուկ օրենքով)[2]: Հայաստանի Առաջին հանրապետության ձևավորման արշալույսին օրենսդրական դաշտի բացակայության պայմաններում քաղաքագիտության կողմից կարևորվող բնութագրական այդ օրինաչափությունը, բնականաբար, չէր կարող դրսևորվել: Չնայած դրան՝ հարկ է նկատել, որ հանրապետության գործադիր իշխանության ձևավորման գործընթացը բազմաթիվ տեսանկյուններով համահունչ էր ժամանակի ժողովրդավարության ոգուն: Այդ հետևության օգտին կարող ենք վկայակոչել բազմաթիվ փաստեր: Դրանցից առաջինն այն է, որ արդեն Հայաստանի Հանրապետության հռչակագրի հրապարակման օրը Հայոց Ազգային խորհուրդը ներկայացուցչական քննարկումներից հետո Հովհաննես Քաջազնունուն հանձնարարեց կազմել հանրապետության գործադիր իշխանություն՝ Նախարարների կաբինետ: Քաղաքական տարաձայնությունների պատճառով կառավարության մեջ մտնելու առաջարկը մերժեցին ՀԺԿ-ն, հայ էսէռներն ու սոցիալ-դեմոկրատները, որով էլ ձախողվեցին կուսակցական սկզբունքներով կառավարություն կազմելու ջանքերը[3]: Այդ առնչությամբ ժողովրդավարությանը

[2] Նույն տեղում, էջ 311:

[3] Հայաստանի Հանրապետության վարչապետի ընտրության վերաբերյալ բավական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ալ. Խատիսյանը: Երբ Հայոց Ազգային խորհուրդը

համահունչ պետք է համարել Հայոց Ազգային խորհրդի և ՀՅԴ ջանքերով ձևավորված Հայաստանի Առաջին հանրապետության անդրանիկ *կոալիցիոն կառավարությունը:* Արժանահիշատակ է մի այլ իրողություն ևս: Թեև արտակարգ պայմանների թելադրանքով Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր իշխանությունը ձևավորվեց ավանդական լեգիտիմության հիման վրա, նրա ժողովրդավարական էության վկայություններից պետք է համարել և այն, որ ինչպես կառավարության, այնպես էլ նրա լիազորությունների ձևավորումն իրականացվեց հանրապետության օրենսդիր բարձրագույն իշխանության՝ Խորհրդի կողմից[4]:

Ժողովրդավարական հանրապետությունների գործադիր իշխանություններին առաջադրվող քաղաքագիտական սկզբունքների ամբողջական դրսևորում պետք է համարել այն, որ վարչապետի գլխավորած կառավարությունը և նախարարների կաբինետը *հաշվետու էին խորհրդին և ենթակա՝ նրա որոշումներին:* Եվ «եթէ կառավարութեան որեւէ գործունէութեան առթիւ պարլամենտի մեծամասնութիւնը յայտնում է իր անվստահութիւնը՝ մինիստրական կազմը ներկայացնելու է իր հրաժարականը եւ փոխարինուելու է նոր կազմով»[5]: Նույնը պետք է պնդել և այն առնչությամբ, որ հանրապետության «Կառավարութեան գործունէութեան ... վրայ հսկում է մի առանձին մարմին՝ պետական կոնտրոլ: Այդ հաստատութիւնը միանգամայն անկախ է կառավարութիւնից եւ ենթակայ է պետական գլխաւոր

---

ձեռնամուխ եղավ Հայաստանի կառավարության ձևավորմանը, գրում է նա, «վարչապետութեան թեկնածու երեք հոգի կային, բայց կարգ մը նկատումներով միաձայնութեամբ որոշուեցաւ ընտրել Յ. Քաջազնունին: Միւս երկու թեկնածուները՝ Կարճիկեանը եւ ես, մտանք Քաջազնունիի դահլիճին մէջ: ... *Քաջազնունին յարգուած ըլլալով միւս կուսակցութիւններու կողմէ, ընդունելի անձնաւորութիւն մըն էր ամէնուն համար* (ընդգծումը մերն է - Ա. Ք.)» (**Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 93): Վավերագրերը վկայում են նաև, որ Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր իշխանության ձևավորման հարցում հայ քաղաքական կուսակցությունները հանդես եկան տրամագծորեն հակադիր պահանջներով: ՀՅԴ-ն պահանջում էր Հայաստանի կառավարությունը կազմել «կուսակցական սկզբունքներով»: Միանգամայն այլ մոտեցում ուներ ՀԺԿ-ն, որը ոչ միայն սկզբունքորեն մերժեց մտնել կառավարության կազմի մեջ, այլև պահանջեց, որ դաշնակցականները հեռանան քաղաքական ասպարեզից և իշխանությունը հանձնվի իրենց: Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Թիֆլիսի ընդհանուր ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ, որոշեց «սկզբունքային նկատառումներով չմտնել կառավարության մեջ»: Իսկ սոցիալ-դեմոկրատները հրաժարվեցին իշխանությունը կիսել բուրժուական համարվող ՀՅԴ հետ: Մանրամասները տե՛ս **Հորիզոն**, IV. 1918, **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 185:

[4] Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարության կազմի մեջ մտան ՀՅԴ չորս ներկայացուցիչներ՝ **Հովհաննես Քաջազնունին**՝ նախարար-նախագահ, **Ալեքսանդր Խատիսյանը**՝ արտաքին գործերի նախարար, **Արամ Մանուկյանը**՝ ներքին գործերի նախարար, **Խաչատուր Կարճիկյանը**՝ ֆինանսների նախարար, և երկու անկուսակցական՝ **Հովհաննես Հախվերդյանը**՝ զինվորական նախարար, և **Գրիգոր Տեր-Պետրոսյանը**՝ արդարադատության նախարար (հուլիսի 28-ից): Տե՛ս **Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)**, Ե., 2000, էջ 53:

[5] **Քաջազնունի Յովհ.**, Հայաստանի Հանրապետութիւն, Ե., 1993, էջ 13:

կոնտրոլերին, որ ընտրում է անմիջապէս պարլամենտի կողմից, պատասխանատու ու հաշուետու է նրա առաջ»[6]:

Արդի քաղաքագիտության մեջ ընդունված է, որ ժողովրդավարական երկրներում «գործադիր իշխանության գործունեությունը կառուցվում է աստիճանակարգված՝ նախագահ (առաջին նախարար), նախարարներ, նախարարության դեպարտամենտի (վարչության, բաժնի) վարիչ և այլն»[7]: Այդ տեսանկյունից ևս հարկ է նշել, որ Հայաստանի Առաջին հանրապետությունն իր գոյության ողջ ընթացքում գործադիր իշխանության կազմավորման գործում առաջնորդվել է նույնական սկզբունքներով: Ընդ որում, այդ գործընթացում պետք է կարևորել և այն, որ կառուցվածքային բոլոր մակարդակներում գործադիր իշխանության աստիճանակարգության մեջ համապատասխան տարրերը հանդես են եկել ինստիտուտացված տեսքով, և որ ամենակարևորն է, իշխանական մարմնի կառուցվածքային այդ տարրերը ևս սահմանել է օրենսդիր իշխանությունը: Այդ մասին Հովհ. Քաջազնունին վկայում է. «Կառավարութեան գլուխ կանգնած է *առաջին մինիստրը, որ է եւ նախագահ մինիստրների խորհրդի: Առաջի(ն) մինիստրը ընտրում է պարլամենտի կողմից: Մինիստրական կաբինետը կազմում է* (մինիստրներին պաշտօնի է հրաւիրում) *առաջին մինիստրը: Առաջին մինիստրը ներկայացնում է պարլամենտին մինիստրների կազմը եւ կառավարութեան յայտարարութիւնը* (դեկլարացիան) *իր վարելիք քաղաքականութեան մասին: Պարլամենտի հաւանութիւնը այդ յայտարարութեան՝ ընդունում է իբրեւ վաւերացում կաբինետի* (ընդգծումը մերն է - Ա. Ք.)»[8]:

Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր իշխանության քաղաքական գործունեության առանձնահատկությունների քննության մեջ ուրույն մոտեցում է ցուցաբերում Ալ. Խատիսյանը: Մասնավորապես, նա կարծում է, թե «1918 թ. ամառէն սկսած մինչեւ 1920 թ. Դեկտեմբեր ամիսը Հայաստանի կառավարութեան խորհուրդը կարելի է բաժանել երեք շրջանի: *Առաջին շրջանը* - կառավարութիւնը նախագահութեամբ Քաջազնունիի - *պետական-կազմակերպչական էր, երկրորդ շրջանը* -Ալ. Խատիսեանի նախագահութեամբ եղած կառավարութիւնը *քաղաքացիական-ստեղծագործական* եւ *երրորդ շրջանը* Հ. Օհանջանեանի եւ Ս. Վրացեանի նախագահութեամբ եղած կառավարութիւնները - *արտաքին եւ ներքին թշնամիներու հետ կռուի շրջան* (ընդգծումը մերն է - Ա. Ք.)»[9]:

Այդ տեսանկյունից Ալ. Խատիսյանը նաև մատնանշում է, որ իր գործունեության առաջին իսկ պահից սկսած՝ Հովհ. Քաջազնունու գլխավորած Հայաստանի նորաստեղծ «պետական-կազմակերպչական» կառավարության «առաջին ստիպողական գործն էր ազգային ներքին շինարարութիւնը, սահմանների ապահովումը և հարեւանների հետ տանելի կենցաղաձեւ ստեղծելը»[10]: Հայտնի է,

---

[6] **Նույն տեղում**, էջ 19:

[7] ***Политология:*** *Энциклопедический словарь, с. 311.*

[8] **Քաջազնունի Յովհ.**, նշվ. աշխ., էջ 13:

[9] **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 133:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 150:

որ արդի քաղաքագիտությունը հասարակության քաղաքական կյանքը դիտարկում է իբրև ամենատարբեր այնպիսի գործընթացների ամբողջություն, որոնց կարգավորումը համարվում է պետական իշխանության կարևորագույն գործառույթներից մեկը: Այդ մեկնակետի դիրքերից Հայաստանի առաջին կառավարության քաղաքական գործառնության ամբողջությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտորեն պետք է հաշվի առնել հասարակական, տնտեսական, քաղաքական և ազգային ծանրագույն այն պայմանները, որոնք Հայաստանում ձևավորվել էին 1917 թ. ռուսական հեղափոխություններից և 1918 թ. թուրք-հայկական պատերազմից հետո: Այդ տեսանկյունից խիստ բնութագրական է հանրապետության խորհրդում վարչապետի հետևյալ հայտարարությունը. «Բացառիկ ծանր պայմանների մեջ է գործի անցել իմ կազմած կառաւարությունը: Նա կոչուած է իրականացնելու գործադիր իշխանութիւն մի պետութեան մեջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակաւին դուրս չի եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ոչ մի հենարան անցեալում. նա չի՛ յաջորդում նախկին կառավարութեանը՝ շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը, նա նոյնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին հարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրուած է սկսելու ամեն բան սկզբից. անձեւ քաոսի և աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին»[11]:

Այդ ամենն աներկբա վկայում են, որ Հայաստանի Առաջին հանրապետության կայացման վաղ փուլում երկրում գրեթե լիովին բացակայում էր քաղաքագիտության կողմից հասարակության բնականոն զարգացման համար անհրաժեշտ պայման համարվող այնպիսի գործոն, ինչպիսին էր *քաղաքական կայունությունը*: Անշուշտ, չպետք է մոռանալ, որ պետական համակարգերի ձևավորման գործընթացում գտնվող երկրներին խիստ բնորոշ է նաև *քաղաքական անկայունությունը*: Սակայն պետական շինարարության և քաղաքական ընթացիկ խնդիրների լուծման գործում Հայաստանում տեղ գտած հասարակական, տնտեսական, քաղաքական և ազգային ծայրաստիճան բարդ պայմանները, երկրի քաղաքական համակարգը, այդ թվում և գործադիր իշխանությունը կանգնեցրել էին խոր ճգնաժամի առջև: Այդ տեսանկյունից խիստ բնորոշ պետք է համարել Հովի. Քաջազնունու այն պնդումը, թե «Հայաստանում կային ... այն բոլոր պայմանները, որ առաջ են բերում մի երկրի մէջ անիշխանութիւն եւ ծայրայեղ մասսային ցնցումներ»[12], այդ իսկ պատճառով էլ «... կառավարութիւնը դնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն՝ կատաստրոֆիկ»[13]:

---

[11] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 57, տե՛ս նաև **Վրացյան Ս.,** նշվ. աշխ., էջ 195:

[12] **Քաջազնունի Ցովի.**, նշվ. աշխ., էջ 27:

[13] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 57, տե՛ս նաև **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 195:

Եվ, ի պատիվ Հայաստանի առաջին կառավարության, պետք է նշել, որ խորապես գիտակցելով հանրապետության ամբողջությունը պահպանելու և կայունություն հաստատելու հրամայականը՝ այն պետական կառավարման ու պետական քաղաքականության իր խիստ սահմանափակ հնարավորություններով որդեգրեց կառուցողական այնպիսի քաղաքականություն, որը երկրում տեղ գտած կոնֆլիկտային իրավիճակները հաղթահարելու, երկիրն «անձև քաոսի» և «աղետալի» վիճակից դուրս բերելու գործում առաջնային համարեց ժողովրդավարական բարեփոխումները: Այդ տեսանկյունից Հայաստանի գործադիր իշխանության քաղաքական պրակտիկայի բնութագրիչներից հաջորդը պետք է համարել պետական շինարարության հիմնախնդրի գործնական լուծումը: Եվ միանգամայն օրինաչափ է, որ կառավարության քաղաքական հայտարարության մեջ արձանագրվում է. «Այս բացառիկ դրութիւնը նախորոշում է արդեն կառավարութեան բնույթը: Նա չի կարող ձգտել բազմակողմանի ու լրիւ գործունեութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակուելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անյետաձգելի խնդիրներով: Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանութեան վիճակից և ստեղծել պետական շինարարութեան համար պայմաններ»[14]:

Նկատենք նաև, որ այդ գործընթացում Հայաստանի Առաջին հանրապետության քաղաքական համակարգի օրենսդիր և գործադիր իշխանություններն առաջնորդվեցին բաց հասարակարգերին բնորոշ արժեքներով: Եվ երբ կառավարությունն իր առաջնահերթ նպատակն էր համարում «Փրկել ժողովուրդը բնաջնջումից. հաստատել տարրական իրաւակարգ եւ հիմք դնել Հայաստանի անկախութեան»[15], նա ամենևին էլ չէր սահմանափակվում միայն համախմբող քաղաքականությամբ: Բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ վարչական մեթոդների կիրառմանը զուգընթաց՝ Հայաստանի առաջին գործադիր իշխանությունը մեծ տեղ է հատկացրել քաղաքական կայունության ինքնավարման մեթոդներին: Իսկ դրանից հետևում է, որ պետական շինարարության վաղ փուլում Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ կառույցների կարգավորման գործառույթները զուգակցվում էին ինչպես հասարակության սուբյեկտների դերի ակտիվացման, այնպես էլ հասարակության ինքնագիտակցության բարձրացման գործընթացների հետ:

Այդ եզրահանգման լավագույն հիմնավորումը Հովի. Քաջազնունու այն հավաստումն է, թե պետական շինարարության և Հայաստանում քաղաքական կայունություն հաստատելու գործում հանրապետության գործադիր իշխանությունը բոլորակերպ հենվել է հայ ժողովրդի աջակցության վրա: «Ժողովուրդը՝ մերկ, քաղցած ու տնազուրկ - , գրում է նա այդ կապակցությամբ,- ցոյց տուեց գիտակցութեան եւ հայրենասիրութեան մի անսպասելի բարձր աստիճան: Անկախ Հայաստանի գաղափարը այնքան ոգեւորած է նրան, որ այդ անկախութիւնը ամրապնդելու համար նա պատրաստ է ենթարկուել անտրտունջ

[14] Նույն տեղում:

[15] **Քաջազնունի Յովի.**, նշվ. աշխ., էջ 26:

ամենածանր զրկանքների, ամենամեծ զոհաբերութիւնների: Մի սքանչելի բնազդով նա ըմբռնել է կատարուող ակտի ամբողջ մեծութիւնը եւ ամէն կերպ զգուշանում է դժարացնել նորածին պետութեան առանց այն էլ խիստ դժար դրութիւնը»[16]: Ավելացնենք նաև, որ Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր իշխանության քաղաքական նշված ընթացքը դրսևորվել է կառավարության գործունեության բոլոր ոլորտներում: Իսկ դա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ բովանդակային տեսանկյունից Հայաստանի առաջին կառավարությունը գործնական հարցերում կողմնորոշվել էր դեպի ժողովրդավարական, բաց հասարակարգերին բնորոշ քաղաքականություն: Մնում է ավելացնել նաև, որ նշված գործընթացում ազդեցիկ դեր է կատարել նաև հանրապետության գործադիր իշխանության բնութագրական մի այլ որակ ևս՝ *կառավարման արդյունավետությունը*, ինչը պերճախոս վկայում է, որ Հայաստանի անդրանիկ կառավարությունը «... սկզբից եւ եթ ըմբռնեց երկրի իրական, անյետաձգելի կարիքները եւ վարեց զգաստ, ռեալ քաղաքականութիւն»[17]:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ կարող ենք պնդել, որ իր գործունեության ընթացքում Հայաստանի «պետական-կազմակերպչական» կառավարությունը զգալի ներդրում է ունեցել հանրապետությունում քաղաքական կայունություն հաստատելու գործում: Մասնավոր գիտություններին թողնելով հասարակական-տնտեսական և իրավական հարաբերությունների ոլորտներում գործադիր իշխանության գործունեության կոնկրետ ոլորտների քննական արժեքավորման հիմնախնդիրները՝ անդրադառնանք դրանց հանրագումարային արդյունքների քաղաքագիտական քննությանը: Այդ նպատակով վերլուծական ելակետ կարելի է ընտրել Հայաստանի առաջին կառավարության միամյա գործունեության արդյունքներն ընդհանրացնող՝ Հովի. Քաջազնունու այն պնդումը, թե պատմական կարճատև այդ ժամանակահատվածում երկրում «Կեանքի եւ գոյքի, ինչպէս նաեւ հաղորդակցութիւնների ապահովութեան համար կազմակերպուեց կենտրոնական եւ տեղական ոստիկանութիւն: Վերակազմուեցին դատական հիմնարկութիւնները եւ վերսկսուեց կանոնաւոր դատավարութիւն: Վերակազմուեց բանակը, թուով փոքր, բայց զօրեղ ոգով եւ կարգապահութեամբ: Վերաբացուեցին դպրոցները: Կանոնաւորուեց փոստային, հեռագրական եւ հեռախօսական հաղորդակցութիւնները, որքան դա հնարին էր նիւթականապէս: Կարգաւորուեց նաեւ որոշ չափով երկաթուղային հաղորդակցութիւնը, որ համարեա անհնարին էր դառել թիւրքերի աւերումից յետոյ ու շարժական կազմի (շոգեկառքերի ու վագոնների) պակասութեան պատճառով: Կարգի բերուեց ֆինանսական սիստեմը, կազմակերպուեցին հարկահանական օրգանները պետական հասոյթները կանոնաւոր կերպով ստանալու համար: Մասամբ վերականգնուեցին, մասամբ նոր կազմակերպուեցին բժշկա-սանիտարական հիմնարկութիւններ եւ հաստատութիւններ էպիդեմիական հիւանդութիւնների դէմ կռուելու համար: Իսկ ամէնից մեծ եռանդ եւ աշխատանք նուիրուեց սոված ժողովրդի պարէնաւորման,

[16] Նույն տեղում, էջ 27-28:

[17] Նույն տեղում, էջ 26:

աշխատանքի անընդունակների խնամատարութեան եւ աւերուած տնտեսութիւնների վերականգնման գործին. պետական բիւջէի կիսից աւելը ծախսուած է այս կարգի պէտքերի համար»[18]:

Այդ ամենը թույլ են տալիս նաև պնդելու, որ Հայաստանի Հանրապետությունում պետական շինարարության ծանրագույն և ճակատագրական այդ ժամանակահատվածում «պետական-կազմակերպչական» բնագավառում կառավարության և՛ գործառնական, և՛ գործնական դերը հանրագումարային արդյունքների տեսանկյունից պետք է դրական համարել: Այդ եզրահանգման օգտին վկայում է այն, որ գործադիր իշխանության միավյա գործունեության շնորհիվ «Հայաստանի մէջ արդէն հաստատուած է իրաւակարգ եւ կանոնաւոր պետական կեանք: Օրէնքները յարգւում են, պետական մեքանիզմը գործում է անարգել եւ այնքան արդիւնաւէտ, որքան թոյլ են տալիս նրա նիւթական միջոցները: Կեանքի եւ գոյքի անձեռնմխելիութիւնը Հայաստանում այսօր ապահովուած է աւելի, քան այդ եղել է նախկին ռուսական ռեժիմի տակ: Ժողովուրդը շատ շուտ ըմբռնեց դեմոկրատիկական կարգերը, գնահատեց այն եւ ամենայն վստահութիւն ցոյց տուեց դէպի իր կառավարութիւնը: Զօրքերը չնայած որ ծայրայեղօրէն յոգնած էին անվերջ կռիւներից եւ ենթակայ ամէն տեսակ զրկանքների, մնացին միշտ կարգապահ ու հնազանդ կառավարութեան: Բանուորական ցոյցերի եւ գործադուլների ոչ մի դէպք տեղի չունեցաւ Հայաստանում»[19]:

Հայաստանի առաջին կառավարության գործունեության համակարգում պետք է առանձնացնել նաև հասարակական սուբյեկտների և, հատկապես, անկախ պետականություն կառուցելու և ինքնուրույն քաղաքական կյանքով ապրելու հայ ժողովրդի ջանքերի միավորումը: Պետական շինարարության գործում հայ ժողովրդի քաղաքական ակտիվության ընդհանրացված գնահատականը կարելի է համարել Հովի. Քաջազնունու այն պնդումը, թե *«Հանրապետութեան միամեայ կեանքը միանգամայն համոզեցուցիչ ապացոյց է, որ նա ընդունակ է ինքնուրոյն գոյութեան եւ հայ ցեղը՝ ինքնաւարութեան* (ընդգծումը մերն է - Ա. Ք.)»[20]: Ժողովրդավարական, բաց համակարգերի քաղաքական գործունեությունը լիովին համահունչ պետք է համարել նաև Հայաստանի Առաջին հանրապետության քաղաքական համակարգի համախմբող, ինչպես նաև հանրապետության սուբյեկտների ինքնավար քաղաքականության զուգակցումը, որի շնորհիվ իրականություն դարձավ հայկական պետականության կայացումը: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ պետք է համարել և այն, որ հայ ժողովրդի «... այս գիտակցութեամբ եւ հայրենասիրութեամբ միայն կարելի է բացատրել այն, որ Հանրապետութիւնը իր կեանքի առաջին տարին՝ այնպիսի դժոխային

[18] Նույն տեղում, էջ 26-27:
[19] Նույն տեղում, էջ 27:
[20] Նույն տեղում:

պայմանների մէջ, ապրեց առանց ներքին ցնցումների ու խռովութիւնների եւ կառաւարութիւնը հնարաւորութիւն ունեցաւ իրաւակարգ հաստատել երկրում»[21]:

Ի մի բերելով այդ ամենը՝ կարող ենք վստահ պնդել, որ քաղաքական որոշումների ընդունման, քաղաքական ընթացիկ հարցերի լուծման և, ընդհանրության մեջ, քաղաքական գործունեության ոլորտում Հայաստանի առաջին կառավարության համար ելակետային են ժողովրդավարությանը բնորոշ հիմնարար տարրերը: Այդ կապակցությամբ պետք է նկատել նաև, որ ժողովրդավարական այդ տարրերը Հայաստանի առաջին կառավարության նպատակասլաց գործունեության շնորհիվ արմատավորվեցին նաև հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ ոլորտներում: Այդ ամենի հետևանքով երկրում ինչ-որ չափով կայունացան տնտեսական հարաբերությունները, հաստատվեց շատ թե քիչ ամբողջական իրավական հենք, կարգավորվեցին պետականության գոյության համար կենսականորեն անհրաժեշտ ներքին և արտաքին հարաբերությունները, նվազագույնի հասավ արտաքին վտանգի հնարավորությունը: Եվ երբ 1919 թ. հունվարին թուրքական զորքերը հեռացան Հայաստանից, զգալիորեն ընդարձակվեց երկրի տարածքը, որի շնորհիվ կառավարության առջև անխուսափելիորեն կանգնեց հանրապետությանը միավորված նոր տարածքներում բնականոն կենսաձև հաստատելու խնդիրը:

Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության գործունեության քաղաքագիտական արժեքավորումն անխուսափելիորեն ենթադրում է նաև գործադիր իշխանության կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրություն: Այդ առնչությամբ ևս հարկ է նկատել, որ Հայաստանի անդրանիկ կառավարության քաղաքական գործունեությունը համապատասխանում էր ժողովրդավարությանն առաջադրվող ընդունված չափանիշներին և իր գործնական-քաղաքական գործունեությամբ *հիշեցնում էր բաց հասարակարգերին բնորոշ գործադիր իշխանություն*: Դա ունի իր բացատրությունը: Հայտնի է, որ արդի քաղաքագիտությունը ժողովրդավարական հասարակարգերի գործադիր իշխանության հիմնարար հատկանիշներից մեկը համարում է այն, որ «Կառավարության անդամների գործառույթը մասնագիտացվում է ըստ որոշակի ոլորտների»[22]: Ժողովրդավարական բաց հասարակարգերին բնորոշ այդ սկզբունքի կիրառումն ի սկզբանե բնորոշ է եղել Հայաստանի առաջին կառավարությանը, որի համակարգում հստակորեն տարանջատվել են բազմաթիվ նախարարություններ՝ իրենց մասնագիտացված կառույցներով: Ժողովրդավարության դիրքերից պետք է կարևորել և այն, որ իր գործունեության ընթացքում հանրապետության գործադիր իշխանությունը հրաժարվեց միակուսակցական կառույցի սկզբունքից և կողմնորոշվեց դեպի *կոալիցիոն գործունեությունը*: Այդ փաստն է վկայում նաև Հովհ. Քաջազնունին,

---

[21] Նույն տեղում:

[22] ***Политология:*** *Энциклопедический словарь, с. 311.*

որը գրում է, թե կառավարության «Առաջին դահլիճները կօալիցիօն էին (դաշնակցականներ ու ժողովրդականներ, զինուորական մինիստրը չէզօք)»[23]:

Ինչպես հասարակության քաղաքական համակարգի, այնպես էլ պետական իշխանության գործունեության համակողմանի արժեքավորման մեկնակետից քաղաքական գիտությունը կառավարական կոալիցիաների հարցն անխուսափելիորեն շաղկապում է նրա գործառնական առանձնահատկությունների հետ: Այդ տեսանկյունից հիմնահարցի քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Առաջին հանրապետության կոալիցիոն գործադիր իշխանությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ ինչպես կառուցվածքային, այնպես էլ գործառնական առումներով այդպես էլ ի զորու չեղավ հանդես գալու իբրև միաձույլ կառույց: Դա ուներ իր պատճառները: Դառնանք դրանցից մի քանիսին:

Սկզբնաղբյուրների վերլուծությունն ակնառու ցույց է տալիս, որ երկրի հասարակական, տնտեսական և քաղաքական անկայուն պայմաններն իրենց դրոշմը թողեցին նաև կառավարական կոալիցիաների գործունեության վրա: Կառավարական կոալիցիաների անկայունության ձևավորման գործում, դրանցից զատ, ազդեցիկ դեր է կատարել և այն, որ քաղաքական կողմնորոշման հենքի վրա կոալիցիա կազմող թևերը պետական շինարարության, ինչպես նաև քաղաքական գործունեության բազմաթիվ ոլորտներում հանդես էին գալիս տարբեր պլատֆորմների դիրքերից, որը երբեմն բացահայտ անհամաձայնության տեսք էր ընդունում: Այդ ամենի պատճառով զգալիորեն նվազեցվում էր հանրապետության գործադիր իշխանության գործառնական արդյունավետությունը, ինչը համապատասխան արտացոլում էր գտնում նաև կառավարության գործնական-քաղաքական գործունեության բոլոր ոլորտներում: Ուստի միանգամայն բնականոն պետք է համարել և այն իրողությունը, որ «Կայունութիւն չկար նաեւ կառաւարութեան մէջ. առաջին տասը ամսւայ ընթացքում չորս անգամ փոխուեց դահլիճի կազմը (մնալով հանդերձ նոյն վարչապետի նախագահութեան տակ)»[24]:

Փաստերը թույլ են տալիս պնդել նաև, որ կառավարական կոալիցիաների անկայունության գործում բացասական ազդեցիկ դեր է կատարել նաև Հայաստանի խորհրդի ներկայացուցչական կազմը: Հայտնի է, որ քաղաքագիտության արդի տեսությունը միանգամայն օրինաչափ է համարում այն, որ *խորհրդարանական հանրապետության շրջանակներում կառավարությունը կազմավորվում է խորհրդարանական մեծամասնություն կազմող կուսակցության հենքի վրա,* և այդ տրամաբանությամբ կառավարությունը գործադիր իշխանությունն իրականացնում է այնքան ժամանակ, որքան վայելում է խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Հանրապետության օրենսդիր բարձրագույն իշխանությունը՝ խորհուրդը, կազմավորվել էր կուսակցական ներկայացուցչության հենքի վրա, որի պատճառով էլ խորհրդարանական մեծամասնություն ձևավորվում էր միայն կուսակցական դաշինքների շնորհիվ: Այդ տեսանկյունից

[23] **Քաջազնունի Ցովհ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 24:
[24] Նույն տեղում:

միանգամայն օրինաչափ է այն, որ Հայաստանի կառավարական «... կոալիցիոնը հաստատուն հիմք չունէր տակը, որովհետեւ չունէր ապահովված մեծամասնութիւն խորհրդարանի մէջ (ժողովրդականները յաճախ բաժանվում էին դաշնակցականներից)»[25]:

Քաղաքագիտության դիտարկմամբ կոալիցիոն կառավարությունները գործադիր իշխանությունն իրականացնելիս անխուսափելիորեն հենվում են կոալիցիոն ուժերի փոխհամաձայնեցված քաղաքական շահերի վրա: Այդ տեսանկյունից Հայաստանի կառավարական կոալիցիաների անկայունության պատճառ պետք է համարել նաև գործադիր համակարգում դաշինք կազմող կուսակցությունների *քաղաքական շահերի անհամատեղելիությունը:* Այդ իրողությունը վկայում է նաև Հայաստանի առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին, որը գրում է, թե երկրի գործադիր իշխանության համակարգում անկայունության ամենաէական պատճառն այն էր, որ «... չկար ծրագրային որոշակի համաձայնութիւն կօալիցիա կազմող կուսակցութիւնների միջեւ»[26]: Քննվող համատեքստում համեմատաբար արդյունավետ պետք է համարել ՀՅԴ - ՀԺԿ կառավարական կոալիցիան, որը ժամանակի մամուլը համարում էր «քայլ դեպի աջ»[27]: Ցավոք, այս պարագայում ևս կոալիցիան երկարատև գործառնական կյանք չունեցավ:

Կոալիցիոն այդ կառավարության անկայունության պատճառների վերլուծության գործում բնութագրական մի այլ փաստ է մատնանշում Ս. Վրացյանը: Նա հավաստում է, որ ՀԺԿ-ի ներկուսակցական տարա-կարծությունների պատճառով գործադիր իշխանության համակարգում ձևավորվել էր զավեշտական մի իրավիճակ, որի հետևանքով «Հայաստանն ուներ երեք պարենաւորման նախարար և ո՛չ մի պարենաւորում: Մի հանգամանք, որ իհարկէ, վնասում էր կառավարութեան հմայքին»[28]: ՀՅԴ - ՀԺԿ կառավարական կոալիցիայի անկայունության պատճառների թվում չի կարելի չհիշատակել նաև բացասական այնպիսի երևույթ, ինչպիսին Հայաստանի առաջին Հանրապետության նկատմամբ արևմտահայերի Գործադիր մարմնի և անձամբ Պողոս Նուբար փաշայի որդեգրած քաղաքականությունն էր, որի պատճառով հրապարակ իջավ տարաձայնությունների միանգամայն նոր «ոլորտ», ինչն էլ վերջնականապես քայքայեց ՀՅԴ - ՀԺԿ կոալիցիան[29]:

Ի մի բերելով այդ ամենը՝ կարող ենք հանգել մի շարք ընդհանուր եզրակացությունների: Ե՛վ կառուցվածքային, և՛ գործառնական տեսանկյուններից Հայաստանի առաջին գործադիր իշխանությունը կողմնորոշվել էր դեպի ժողովրդավարություն և իր քաղաքական գործունեությամբ մերձենում էր բաց հասարակարգերին հատուկ տիպական կառավարման համակարգին: Թեև երկրի

---

[25] Նույն տեղում, էջ 24-25:
[26] Նույն տեղում, էջ 25:
[27] Տե՛ս Հորիզոն, 10. XI. 1918:
[28] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ. էջ 207:
[29] Նույն տեղում, էջ 282:

հասարակական-տնտեսական և քաղաքական ծանրագույն պայմանները մեծապես արգելակեցին գործադիր իշխանության բնականոն գործունեությունը, վերջինիս ժողովրդավարական բնութագրիչներից պետք է համարել նաև կառավարական կոալիցիաները: Ցավոք, առկա պայմանների ազդեցությամբ Հայաստանի անդրանիկ կառավարությունն այդպես էլ չկարողացավ իր գործունեության բոլոր ոլորտներում հետևել ժողովրդավարությանը բնորոշ դրական այդ միտումներին:

Այդ կապակցությամբ Հայաստանի առաջին կառավարության գործունեության ընդհանրացնող արժեքային մոտեցում կարելի է համարել Հովի. Քաջազնունու հետևյալ պնդումը. «Կառաւարութեան աշխատանքի արդիւնքը շատ հեռու է բաւարար լինելուց. կան բազմաթիւ եւ աղաղակող կարիքներ, որ տակաւին սպասում են լրացման: Բայց եթէ նկատի առնել այն բացառիկ դժար պայմանները, որի մէջ դրուած էր կառաւարութիւնը, երկրի քայքայուած վիճակը եւ նիւթական միջոցների ծայրայեղ պակասութիւնը, չափազանցութիւն չի լինի ասել, թէ արդիւնքները եղել են աւելի, քան կարելի էր պահանջել ու սպասել»[30]:

## ПЕРВАЯ ИСПОЛНИТЕЛЬНАЯ ВЛАСТЬ АРМЕНИИ И ЕЕ ПРАКТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

КАЛАШЯН А. А

**Резюме**

Первое правительство Армении сформировалось на основе традиционного легитимизма, однако политическими ориентирами данного процесса были демократические принципы современных открытых обществ. Правительством руководил “Первый министр”. Он, а также состав правительства утверждались парламентом Республики, контролировавшим их деятельность. По существу, демократическим был и коалиционный состав правительства, и формы его практической политической деятельности.

Первое правительство Армении осуществляло многогранную деятельность в направлении государственного строительства, что во многом способствовало становлению государственности в Армении.

В силу объективных и субъективных факторов коалиционное устройство первого правительства Первой Республики Армении было неустойчивым, а демократические формы функционирования этого правительства остались незавершенными, так как не были доведены до конца.

[30] **Քաջազնունի Յովի.**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 27: